ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ՍՊԻՏԱԿ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ՋՐԱՇԵՆ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Բնակիչների նախնիները գառթել են Արևմտյան Հայաստանի Տարոնի գավառից, հիմնականում Մուշից. Բուլանուխից, Խնուսի գյուղերից, 1827-30թթ. Սկզբում հիմնավորվել են 27 ընտանիք, որոնց շնչերի քանակը չի բավարորել՝ գյուղ գրանցվելու համար, և միայն 1830թ, -ին, երբ ռուս թուրքական պատերազմի հետևանքով բնիկ հայրենիքից նոր ընտանիքներ են գաղթվել, միագել նրանց, բնակավայրը որպես գյուղ գրանցվել է և կոչվել է Վարդնավ (Որդնավ), Անունը տարբեր կերա է ստուգաբանվում, Վարդանավան կամ՝ Վարդ(ջուր) նավ: Ջրաշին է վերանվանվել 1949թ. (որոշ ժամանակ կոչվել է նաև Ջրաշատ):

1884թ. -ին ավարտին է հասցվել տեղի Ս. Նշան եկեղեցու շինարարությունը, որը գործել է մինչև խորհրդային կարգերի հաստատումը, որին կից գործել է ծխական դպրոց: 1988թվականի երկրաշարժի հետևանքով եկեղեցին հիմնովին ավերվել է:

Խորհրդային շրջանում առաջին դպրոցները բացվել են երեսնական թվականներին, համեմատաբար մեծ սենյակներ ունեցող տներում, այնուհետև կառուցվել է ութնամյա դպրոց: 1956թ. շահագործման է հանձնվել միջնակարգ դպրոցի շենքը: Կոլտնտեսությունը ստեղծվել է 1932թ: 1972թվականից վերածվել անասնապահական, ճակնդեղագործական խորհրդային տնտեսության: Ջրաշենում էր Սպիտակի կարի արտադրական միավորման մասնաճյուղը, որը Լեռնավանի և Սարամեջի արտադրամասերով հանդերձ ուներ շուրջ 700 բանվոր ծառայող, գործում էր կապի բաժանմունք մոտ 500 հեռախոսային բաժանորդներով. կենցաղ - սպասարկման տաղավար, կինո, մանկապարտեզ. հիվանդանոց, մշակույթի տուն, գրադարան: Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 400 ջրաշենցիներ, նրանցից 228-ը չեն վերադարձել:

Արցախյան ազատամարտին մասնակցել են և կամավորական, և ժամկետային ծառայող զինվոր ջրաշենցիներ: Նրանցից 4-ը զոհվել են պատերազմական շրջանում կամ զինվորական պարտականությունը կատարելիս: Փաստագրված տվյալներով, երկրաշարժից զոհվել է 247 ջրաշենցի, իրականում մոտ 270:

Այժմ բնակավայրն ունի ունի 1103 ծուխ, 3624 բնակիչ: Ծնունդով ջրաշենցի են դոցենտ էմիլ Մանուկյանը (ԵՊԳԱ դասախոս), ժորա Բաղդասարյանը (ՎՊՄԻ դասախոս), Աշոտ Առաքելյանը (ՎՊՄԻ դասախոս), Ատոմ Մխիթարյանը, փոխգնդապետ Փայլակ Ուռուսյանը, բանաստեղծ Վաչիկ Մելքոնյանը. նախկինում ՀԽՍՀ գերագույն խորհրդի պատգամավոր Պարզիկ Բադիկյանը, կրթության և գիտության փոխնախարար Ռոբերտ Զարգարյանը և այլոք...

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ջրաշեն գյուղը գտնվում է Լոռու մարզում, Սպիտակի նախկին շրջանի վարչական տարածքում՝ Փամբակի լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան լանջին: Սահմանակից է Սպիտակ քաղաքին, Սարամեջ, Լեռնավան և Կաթնաջուր գյուղերին, Արագածումի մարզից՝ Լեռնապար, Սիփան, Գեղարոտ, Ջամշլու և Ծիլքար գյուղերին: Ծովի մակերևույթից բարձր է 1700մ, վարչական տարածքը կազմում է 3738.66 հա Համայնքի զբաղվածության հիմնական ճյուղն է համարվում հո ղա գոր ծու թյու նը, անասնապահությունը՝ թերի է զարգացած:
Ոչ գյուղատնտեսական գործունեությունը համայնքում թույլ է զարգացած: Տարվա եղանակներից անհամեմատ լավն է աշունը, ձմեռը երբեմն խստաշունչ է. գարունը սովորաբար ուշացած է գալիս, իսկ ամառը զով է: Տարեկան տեղումները քիչ են, լինում է նաև կարկտահարություն: Բնակավայրը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում, հաճախակի են լինում երկրաշարժեր:

3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ) –	300-500
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (^{0}C) –	- 5-ից -20
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (^{0}C) –	20-ից 33

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Ջրաշեն
2. Բնակավայրի հեռավորությունը՝	
2.1) համայնքի կենտրոնից (կմ)	9
2.2) մայրաքաղաքից (կմ)	90
2.3) մարզկենտրոնից (կմ)	30
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	120
2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	9
2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	-
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	10
4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1700
5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	3738.66

6.Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Սպիտակ քաղաքին, Սարամեջ, Լեռնավան և Կաթնաջուր բնակավայրներին, Արագածոտնի մարզից՝ Լեռնապար, Սիփան, Գեղարոտ, Ջամշլու և Ծիլքար բնակավայրերին
7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	098-04-08-03
8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	Այո 1
9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	Այո
10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	Ոչ

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2022թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	3626
2. Գրանցված ծնունդների քանակը	26
2.Մահացության դեպքերի քանակը	19
3.Ամուսնությունների քանակը	20
4. Ամուսնալուծությունների քանակը	-
5. Տնային տնտեսությունների թիվը	837
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	185
7. Կենսաթոշակառուների քանակը	92
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	172

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2023թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	-
3. Երաժշտական դպրոցների քանակը	-

4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	-
5. Հանրակրթական դպրոցների քանակը	-
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	-
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	-
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	-
9. Մարզադպրոցների քանակը	1

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2023թ.
1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	70.300
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	1
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	534

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2023թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	3091.35
2. Բնակավայրերի հողեր (հա)	266.60
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	34.79
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներ	28.57
5. Հատուկ նշանակության	-
6. Հատուկ պահպանվող տարածքների	9.20
7. Անտառային	302.36
8. Ջրային	5.80
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	1132
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	312
11. Խոզերի գլուխաքանակը	73
12. Գյուղատնտեսական տեխնիկա	-
12.1 տրակտորներ (քանակը)	-
12.2 կոմբայններ (քանակը)	-
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	747

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	11
2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	Այո
3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	Ոչ
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ)	Ոչ
5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	25
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	-
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	-
6.2 Էքսկավատորների քանակը	-
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	-
6.4 Գրեյդերների քանակը	-
6.5 Աղբատար մեքենաների քանակը	-
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	-
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	-
6.9 Ավտոաշտարակների քանակը	-
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	8
8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	-
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	Ոչ
10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	Ոչ

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2023թ.
1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը,	5
որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	2
2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	-

11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները
Ջրաշեն բնակավայրի փողոցների վերակառուցման աշխատանքներ	Նախատեսվում է վերանորոգել բնակավայրում առկա անբարեկարգ փողոցները, որոնք անսխիթար վիճակում են Երթևեկը ցածր է (հիմնականում երթևեկում են հարակից տների կամ այլընտրանք չունեցող փողոցների ազգաբնակչությունը): Ծրագիրն իրագործելու դեպքում կունենա երկարաժամկետ ազդեցություն : Իրականացման արդյունքում բնակավայրի թվով 450 տնտեսություն իրեն տեղաշարժը կիրականացնի բարեկարգ փողոցներով:
Ջրաշեն համայնքի լուսավորության համակարգի կառուցում	Բնակավայրում կան փողոցներ, որոնք դեռ լուսավորված չեն, սակայն համայնքի համար ունեն կենսական նշանակություն, այդ իսկ պատճառով էլ նախատեսվում է իրականացնել լուսավորության համակարգի կառուցում: Իրականացման արդյունքում այն կապահովի բնակչության լուսավորված և բարեկարգ ճանապարհով երթևեկն ու տեղաշարժը:
Գազաֆիկացում	Բնակավայրում կան փողոցներ, որոնք դեռ լուսավորված չեն, սակայն համայնքի համար ունեն կենսական նշանակություն, այդ իսկ պատճառով էլ նախատեսվում է իրականացնել լուսավորության համակարգի կառուցում: Իրականացման արդյունքում այն կապահովի բնակչության լուսավորված և բարեկարգ ճանապարհով երթևեկն ու տեղաշարժը:
Ջրամատակարարում	Նախատեսվում է բնակավայրում շուրջօրյա ջրամատակարարման համակարգ ստեղծել:
Մանկապարտեզի կառուցում	Նախատեսվում բնակավայրում կառուցել մանկապարտեզի շենք որի արդյունքում բնակավայրի շուրջ 240 երեխաներ կհաճախեն մանկապարտեզ և կստանան նախադպրոցական կրթություն:

Ոռոգման համակարգի կառուցում	Բնակավայրում գյուղատնտեսական աշխատանքների խթանման, գյուղատնտեսության զարգացման նպատակով նախատեսվում է կառուցել ոռոգման համակարգ:
Գերեզմանատան ցանկապատում	Նախատեսվում է բնակավայրի գերեզմանատան տարածքը ցանկապատել ամբողջությամբ, դարձնել անհնարին ընտանի կենդանիների մուտքը գերեզմանատուն և ապահովել շիրիմների մաքրությունն ու պահպանությունը: